

Պրոֆեսիոնալ Էթիկայի Հոչակագիր

Հաստատված՝ Միջազգային Վիճակագրական
Ինստիտուտի Խորհրդի կողմից
2010 թ. հուլիսի 22 և 23-ին
Ռեյկյավիկ, Իսլանդիա

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտ –մշտական գրասենյակ
24070
2490 ԱԲ Հաագա
Նիդեռլանդներ
<http://isi-web.org/about/ethics-intro>

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Պրոֆեսիոնալ Էթիկայի Հռչակագիր

Նախաբան, արժեքներ, սկզբունքներ, տեղեկատվություն

Էջ

Նախաբան -----	3
Ընդհանուր պրոֆեսիոնալ արժեքներ -----	5
Էթիկայի սկզբունքներ -----	7
Տեղեկատվական նշումներ -----	10

Լրացուցիչ տեղեկատվության և մատենագիտական մանրամասների համար (միայն անգլերեն), խնդրում ենք այցելել Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի կայքէջը:<http://isi-web.org/about/ethics-intro>

Նախաբան

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագիրը կազմված է Ընդհանուր Պրոֆեսիոնալ Արժեքներից և այդ արժեքներից բխող էթիկայի Սկզբունքներից:

Մույն փաստաթղթի նպատակներից է՝ սահմանել թե “ով է վիճակագիրը”, որը շատ ավելի է, քան նրանք, ովքեր ունեն պաշտոնական աստիճաններ քննազատում, և ներառել վիճակագրական տվյալներ և գործիքներ ստեղծողների և սպառողների լայն զանգված: Վիճակագիրները աշխատում են բազմազան տնտեսական, մշակութային, իրավական և քաղաքական միջավայրերում, որոնցից յուրաքանչյուրն ազդում է վիճակագրական հարցման շեշտադրման և կենտրոնացման վրա: Նրանք նաև աշխատում են իրենց գիտության մի շարք տարբեր ճյուղերից մեկում, որոնցից յուրաքանչյուրը ներառում է իր ուրույն տեխնիկան և ընթացակարգերը ու, հավանաբար, իր ուրույն էթիկայի մոտեցումը:

Վիճակագիրներն աշխատում են բազմազան բնագավառներում, ինչպիսիք են՝ տնտեսագիտությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, բժշկությունը, որոնց մասնագետներն ունեն էթիկայի կոնվենցիաներ, որոնք կարող են ազդել նրանց վարքագծի վրա: Նույնիսկ վիճակագրության միևնույն միջավայրում և ճյուղում անհատները կարող են հանդիպել տարբեր իրավիճակների և սահմանափակումների, որոնցում ի հայտ են գալիս էթիկայի հարցերը:

Մույն հռչակագրի նպատակն է՝ հնարավորություն տալ վիճակագիրների անհատական էթիկայի դատողություններին և որոշումներին լինել առավել տեղեկացված, քան մասնագիտությունից բխող խիստ կանոններով: Հռչակագիրը ձգտում է փաստաթղթավորել վիճակագրության մասնագիտության լայնորեն կիրառվող սկզբունքները և սահմանել այն գործոնները, որոնք խոչնդոտում են դրանց իրականացմանը: Այն հռչակում է, որ մեկ սկզբունքի գործողությունը կարող է խոչնդոտել մյուսի գործողությանը, որ վիճակագիրները այլ մասնագիտական խմբերի հետ միասին ունեն մրցակցային պարտավորություններ, որոնցից ոչ բոլորը կարող են կատարել միաժամանակ: Հետևաբար, վիճակագիրները երբեմն ստիպված են ընտրություն կատարել սկզբունքների միջև: Հռչակագիրը չի փորձում լուծել այդ ընտրությունները կամ առաջնություններ սահմանել այդ սկզբունքների միջև: Փոխարենը, այն առաջարկում է շրջանակ, որի սահմաններում բարեխիղճ վիճակագիրը պետք է կարողանա աշխատել հարմարավետորեն: Այն կոչ է անում, որ շեղումները սկզբունքների շրջանակից լինեն առավել կշռադատման, քան անտեսման արդյունք:

Հռչակագրի առաջին նպատակն է՝ լինել առավել տեղեկատվական և նկարագրական, քան ավտորիտար կամ կարգադրողական: Երկրորդը՝ մշակված է, որ լինել որքան հնարավոր է կիրառելի վիճակագրական մեթոդաբանության և կիրառության ընդարձակ և փոփոխվող որոտների համար: Այդ պատճառով դրա հողվածները ձևակերպված են բավականին ընդարձակ: Երրորդը՝ չնայած սկզբունքները մշակված են այնպես, որ ունենան առավել լայն կիրառում որոշումների, քան

հիմնախնդիրների նկատմամբ, առանձնահատուկ նշվում է, որ հռչակագիրը ոչ մի դեպքում ապառիչ չէ: Այն մշակված է այն գիտակցությամբ, որ կպահանջի պարբերաբար արդիականացում և լրացում, արտացոլելով մի կողմից վիճակագիրների կողմից օգտագործվող տեղեկատվության և տեխնիկական գործիքների սերնդի, իսկ մյուս կողմից վիճակագրական արտադրանքի օգտագործման (և հետևաբար սխալ օգտագործման) զարգացումները: Չորորդը՝ արժեքները, սկզբունքները և մեկնաբանությունները, որոնք հետևում են ընդհանուր գրված կամ չգրված կանոնների կամ նորմերի ընդունմանը, ինչպիսիք են համապատասխանությունը օրենքին կամ ազնվության պահանջը: Այնուամենայնիվ, հռչակագիրը որքան հնարավոր է սահմանափակում է ինքն իրեն վիճակագրական հարցման հատուկ մտահոգություն ունեցող հարցերով:

Չնայած, որ հստակ սահմանված չէ, Սկզբունքներն ըստ էության արտացոլում են վիճակագիրների պարտականությունները և պատասխանատվությունները, ինչպես նաև դրանցից բխող կոնֆլիկտները, որոնց հետ բախվում են վիճակագիրները, իրենց սեփական կատարումից դուրս ուժերի և ճնշումների նկատմամբ, այն է.

- Հասարակության
- Գործատուների, հաճախորդների և ֆինանսավորողների
- Գործընկերների
- Սուբյեկտների հանդեպ:

Իր պատասխանատվություններն իրականացնելիս, յուրաքանչյուր վիճակագիր պետք է համոզված լինի, որ իր գործողությունները, առաջինը՝ համապատասխանում են յուրաքանչյուր խմբի լավագույն շահերին և երկրորդը՝ չեն տալիս նախապատվություն որևէ խմբի մյուսի հաշվին կամ հակասում Սկզբունքներից որևէ մեկին:

Սկզբունքները ուղեկցվում են կարճ մեկնաբանություններով դրանց կիրառմանը բնորոշ կոնֆլիկտների և դժվարությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր էթիկայի սկզբունքի համար ներկայացված է հղում նրանց համար, ովքեր ցանկանում են հետևել հիմնախնդիրներին: Նմանապես, մեկնաբանություններից հետո ներկայացված է համառոտ գրականության ցանկ նրանց համար, ովքեր ցանկանում են հետևել հիմնախնդիրներին կամ ուսունասիրել առավել մանրամասն տեքստեր:

Ընդհանուր պրոֆեսիոնալ արժեքներ

Մեր ընդհանուր պրոֆեսիոնալ արժեքներն են հարգանքը, պրոֆեսիոնալիզմը, ճշմարտացիությունը և ամբողջությունը:

1. Հարգանք

Մենք հարգում ենք այլոց գաղտնիքը և նրանց տրված գաղտնիության խոստումները:

Մենք հարգում ենք համայնքներին, որտեղ հավաքագրվում են տվյալները և պաշպանում ենք նրանց արդյունքների սխալ օգտագործման վնասից:

Մենք չպետք է ճնշենք կամ ոչ պատշաճ նսեմացնենք այլոց աշխատանքը:

2. Պրոֆեսիոնալիզմ

Պրոֆեսիոնալիզմ արժեքը ենթադրում է Պատասխանատվություն, Իրավասություն, Փորձագիտական գիտելիքներ և Տեղեկացված դատողություններ:

Մենք աշխատում ենք հասկանալու մեր սպառողների կարիքները:

Մենք օգտագործում ենք մեր վիճակագրական գիտելիքները, տվյալները և վերլուծությունները Հանրային Շահի համար ծառայելու հասարակությանը:

Մենք ձգտում ենք հավաքագրել և վերլուծել հնարավոր ամենաբարձր որակի տվյալներ:

Մենք պատասխանատու ենք տվյալների և մեթոդների համապատասխանության համար:

Մենք քննարկում ենք հիմնախնդիրները օբյեկտիվորեն և ձգտում ենք նպաստել խնդիրների լուծմանը:

Մենք ենթարկվում ենք օրենքին և աշխատում ենք փոխել այն օրենքները, որոնք կարծում ենք, որ խանգարում են լավ վիճակագրական պրակտիկային:

Մենք շարունակաբար ուսումնասիրում ենք մեր սեփական բնագավառը, ինչպես նաև այն բնագավառները, որոնց հանդեպ մենք կիրառում ենք մեր մեթոդները:

Մենք ըստ անհրաժեշտության մշակում ենք նոր մեթոդներ:

Մենք չենք ստանձնում այն հանձնառությունները, որոնցում ունենք հստակ շահերի բախում:

Մենք գործում ենք պատասխանատվությամբ մեր գործատուների հետ:

3. Ըճմարտացիություն և ամբողջություն

Ըճմարտացիության և ամբողջության ներքո մենք հասկանում ենք Անկախություն, Օբյեկտիվություն և Թափանցիկություն:

Մենք արտադրում ենք վիճակագրական արդյունքներ, օգտագործելով մեր գիտությունը և չենք գտնվում քաղաքական գործիչների կամ ֆինանսավորողների ճնշման ազդեցության տակ:

Մենք թափանցիկ ենք օգտագործված վիճակագրական մեթոդաբանությունների մասին և այդ մեթոդաբանությունները դարձնում ենք հրապարակային:

Մենք ձգտում ենք արտադրել արդյունքներ, որոնք արտացոլում են դիտարկվող երևույթները անկանխակալ ձևով:

Մենք ներկայացնում ենք տվյալները և վերլուծությունները ազնվորեն և բացահայտորեն:

Մենք հաշվետու ենք մեր գործողությունների համար:

Մենք հարգում ենք մտավոր սեփականությունը:

Որպես գիտնականներ, մենք հետևում ենք խոստումնալից նոր գաղափարներին և հրաժարվում ենք նրանցից, որոնք գործող չեն:

Մենք աշխատում ենք մեր տվյալների և եզրակացությունների տրամաբանական կապակցվածության և փորձառական համապատասխանության ուղղությամբ:

Մենք արժեվորում ենք գնահատման լավ հիմնված օբյեկտիվ չափանիշը:

Էթիկայի սկզբունքները

1. Հետամուտ լինել օբյեկտիվությանը

Վիճակագիրները պետք է հետամուտ լինեն օբյեկտիվությանը առանց մտավախության կամ բարեհաճության, միայն ընտրելով և օգտագործելով մեթոդներ՝ մշակված առավել ճշգրիտ տվյալներ արտադրելու համար: Նրանք պետք է ներկայացնեն բոլոր արդյունքները բացահայտորեն, ամբողջական և թափանցիկ ձևով, անկախ արդյունքներից: Վիճակագիրները պետք է հատկապես լինեն զգայուն արդյունքները ներկայացնելու պահանջին, երբ նրանք վիճարկում են նախընտրելի արդյունքը: Վիճակագիրը պետք է պաշտպանված լինի կանխատեսելի սխալ մեկնաբանությունից կամ օգտագործումից: Եթե առաջանում է նման սխալ մեկնաբանություն կամ օգտագործում, ապա պետք է քայլեր ձեռնարկվեն տեղեկացնելու պոտենցիալ սպառողներին: Արդյունքները պետք է հայտնվեն ի շահ հնարավորինս լայն հանրության, սակայն փորձելով վնաս չհասցնել բնակչության որևէ խմբի:

2. Պարտականությունների և դերերի հստակեցում

Գործատուի, հաճախորդի, կամ ֆինանսավորողի և վիճակագրի համապատասխան պարտականություններն իրենց դերերի և պատասխանատվության հետ կապված, որոնք կարող են առաջացնել էթիկայի հարցեր, պետք է լինեն գրված և ամբողջությամբ հասկանալի: Խորհրդատվություն կամ ուղղություն տրամադրելիս, վիճակագիրները պետք է ջանան մնալու իրենց իրավասության ոլորտում և փնտրեն, ըստ անհրաժեշտության, խորհուրդներ համապատասխան փորձ ունեցող այլ անձանցից:

3. Այլընտրանքների անկողմնակալ գնահատում

Առկա մեթոդներն ու ընթացակարգերը պետք է հաշվի առնվեն և այլընտրանքների համապատասխան արժանիքների ու սահմանափակումների անկողմնակալ գնահատական տրամադրվի գործատուին, հաճախորդին կամ ֆինանսավորողին, առաջարկվող մեթոդի հետ մեկտեղ:

4. Շահերի բախում

Վիճակագիրները խուսափում են այն հանձնառություններից, որտեղ նրանք աշխատանքի արդյունքում ունեն ֆինանսական կամ անձնական շահի բախում: Տարբեր տեսակի տվյալների հավաքագրման և տարածման ու դրանց արդյունքների վերլուծության հավանական հետևանքները պետք է հաշվի առնվեն և ուսումնասիրվեն:

5. Խուսափել կանխորոշված արդյունքներից

Ցանկացած փորձ հաստատելու կանխորոշված արդյունք առաջարկվող վիճակագրական հարցումից պետք է մերժվի, քանի որ պայմանագրային պայմանները պետք է պայմանավորված լինեն նման պահանջով:

6. Արտոնյալ տեղեկատվության պահպանում

Արտոնյալ տեղեկատվությունը պետք է պահպանվի գաղտնի: Այս արգելքը չպետք է տարածվի հարցում կատարելու կամ հրապարակված տվյալներ արդադրելու համար օգտագործվող վիճակագրական մեթոդների և ընթացակարգերի վրա:

7. Պրոֆեսիոնալ իրավասության ցուցադրություն

Վիճակագիրները պետք է ձգտեն բարելավելու իրենց պրոֆեսիոնալ գիտելիքներն ու հմտությունները և պահպանեն իրենց բնագավառին վերաբերող տեխնոլոգիական զարգացումների, ընթացակարգերի և ստանդարտների իրազեկումը, և պետք է խրախուսեն այլոց անել նույնը:

8. Վստահության պահպանումը վիճակագրությունում

Հանրության վստահությունը խթանելու և պահպանելու համար, վիճակագիրները պետք է երաշխավորեն, որ իրենք հստակորեն և ճշգրտորեն նկարագրել են իրենց արդյունքները, ներառյալ իրենց տվյալների բացատրական հզորությունը: Վիճակագիրների պարտականությունն է՝ զգուշացնել արդյունքների պոտենցիալ սպառողներին դրանց արժանահավատության և կիրառելիության սահմանափակումների վերաբերյալ:

9. Մեթոդների և արդյունքների ներկայացում և վերանայում

Համապատասխան տեղեկատվությունը պետք է տրամադրվի հանրությանը՝ թույլ տալու անկախորեն գնահատելու մեթոդները, ընթացակարգերը, տեխնիկան և արդյունքները:

10. Էթիկայի սկզբունքների հաղորդակցումը

Համագործակցելով գործընկերների և այլոց հետ նույն կամ այլ որոշումներում, անհրաժեշտ և կարևոր է ապահովել, որ բոլոր մասնակիցների էթիկայի սկզբունքները լինեն հստակ, հասկանալի, հարգված և արտացոլված պարտավորությունում:

11. Պատասխանատվության կրում ոլորտի ամբողջության համար

Վիճակագիրները ենթակա են գիտական և գիտնականներին բնորոշ վարքագծի ընդհանուր բարոյական կանոններին. նրանք չպետք է ստեն կամ գիտակցաբար խեղաթյուրեն կամ փորձեն կանխել սխալ կատարման հաշվետվությունը կամ խոչընդոտեն այլոց գիտական/գիտնականներին բնորոշ, հետազոտությունները:

12. Սուբյեկտների շահերի պաշտպանությունը

Վիճակագիրները պարտավոր են, որքան հնարավոր է, պաշտպանել անհատականորեն կամ խմբային, սուբյեկտներին մասնակցության պոտենցիալ վնասակար ազդեցություններից: Այս պատասխանատվությունը արդարացված չէ մասնակցելու համաձայնությամբ կամ իրավական պահանջով: Վիճակագրական հարցման որոշ վիրավորական ձևերը պահանջում են, որ դրանք պետք է իրականացվեն միայն մեծ խնամքով, ամբողջականության անհրաժեշտության հիմնավորմամբ և ներգրավածների ծանուցմամբ: Այդ հարցումները պետք է հիմնված լինեն, որքան որ հնարավոր է գործնականում, սուբյեկտների ազատորեն տրված,

տեղեկացված համաձայնության վրա: Բոլոր սուբյեկտների կամ ռեսպոնդենտների նույնացուցիչները և գրառումները պետք է պահպանվեն գաղտնի: Պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումներ կանխարգելելու տվյալների այնպիսի ձևով թողարկումը, որը հնարավորություն կընձեռի բացահայտելու կամ եզրակացնելու սուբյեկտի կամ ռեսպոնդենտի ինքնությունը:

Տեղեկատվական նշումներ

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի ներգրավումը պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրի ստեղծմանը երկարաձգվել է նախորդ դարի վերջին քառորդում: Ինստիտուտի Բյուրոն, ի պատասխան անդամների կողմից ներկայացուցությունների և Հետագա Ուղղությունների գծով Ինստիտուտի Կոմիտեի առաջարկության, ի սկզբանե, 1979թ. Մանիլայում, Միջազգային վիճակագրական ինստիտուտի 42-րդ նստաշրջանի ժամանակ, հիմնեց Վիճակագիրների համար էթիկայի Օրենսգրքի գծով Կոմիտեի: Այդ Կոմիտեն¹ մշակեց օրենսգիրք, որը ընդունվեց Ինստիտուտի կողմից 1985թ. իր հարյուրամյակի տոնակատարության ժամանակ, Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Գլխավոր Վեհաժողովի կողմից 1985թ. օգոստոսի 21-ին ընդունելով հետևյալ որոշումը.

- ճանաչել, որ Վիճակագիրների համար պրոֆեսիոնալ էթիկայի հռչակագրի նպատակն է՝ փաստաթղթավորել ընդհանուր պրոֆեսիոնալ արժեքները և փորձը, որպես միջոց տրամադրու ուղեցույց, այլ ոչ թե կանոնակարգ;
- ընդունել Հռչակագիրը որպես անդամակիցների՝ այս հարցերով մտահոգված լինելու հաստատում և դրա վճռականությունը խթանելու աշխարհի վիճակագիրների գիտելիքներն ու հետաքրքրությունները պրոֆեսիոնալ էթիկայում:
- որոշել ուղարկել Հռչակագիրը Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի և դրա բաժինների բոլոր անդամներին և տարածել այն ըստ անհրաժեշտության վիճակագրական մասնագիտություն ունեցողների շարքում;
- գովել Հռչակագրի մշակման համար պատասխանատու Կոմիտեն վերջին հինգ տարվա ընթացքում իր մանրակրկիտ, արդյունավետ և հաջողակ աշխատանքի համար:

Ժամանակի ընթացքում Ինստիտուտը որոշեց, որ անհրաժեշտ է արդիականացնել Հռչակագիրը: 2006թ. հուլիսին Գործադիր Կոմիտեն հատուկ հրավիրեց իր մշտական Պրոֆեսիոնալ էթիկայի Կոմիտեին² վերանայելու Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Հռչակագիրը և “առիթ առաջանալու դեպքում, (առաջարկել) արդիականացումներ Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի Հռչակագրի վերաբերյալ”: Ներկայումս Կոմիտեն դա իրականացրել է: Վերանայված փաստաթուղթը, որը նախապատրաստված էր Ֆրանսիայի վիճակագրական և տնտեսական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտի (INSEE) կողմից 2007թ. մայիսին Փարիզում կազմակերպված հանդիպման համար, որին հետևեց Լիսաբոնում

¹ Կոմիտեն ղեկավարում էր Ռոջեր Ջովելլը: Տկզբնական անդամներն էին՝ Վ. Էդվարդս Դեմինգը, Առնո Դոնդան, Հելմուտ Վ. Մուխսամը և Էդմունդ Ռապապորտը, որոնց հետագայում միացան՝ Էդմունդո Բերումեն-Տորրեսը, Հիլբերտ Մոտսեմմեն և Ռենե Պադիեուն:

² Ներկայիս Կոմիտեի կազմում են՝ Դեյվիդ Մորգանստեյնը (նախագահ), Մարգո Անդերսոնը, Էդմունդո Բերումենը, Ստեֆան Ե. Ֆիենբերգը, Ֆրեդ Նոն, Ռոջեր Ջովելլը, Դենիս Լիվալին, Օլավ Լյոնեսը, Բիլլ Մելթզերը և Յան Ռոբերտ Սուեսերը: Կոմիտեն ստանում է կարևոր աջակցություն էթիկայի Խորհրդատվական Խմբի կողմից, որի կազմում են Ժան-Լուիս Բոդինը, Օլիվեր Ջ.Ս. Չինգանյան, Հովարդ Գաբրիելը, Դան Լևելինը, Ռենե Պադիեուն, Հրաչյա Պետրոսյանը և Նորբերդ Վիկտորը:

Միջազգային Վիճակագրական Ինստիտուտի միջազգային հանդիպումների ժամանակ 2007 թ. օգոստոսին կայացած բաց հանդիպումը, որի ժամանակ բոլոր այս ջանքերի արդյունքները ներկայացվեցին մասնակիցներին, ակնկալելով նրանց մեկնաբանությունները և արձագանքները: Չնայած որ պայմանագիրը պարզ էր շատ կետերով, ներկայացվեցին մի շարք առաջարկություններ հետագա փորձաքննության համար, որոնք արտացոլված են որպես լրացում Ընդհանուր Պրոֆեսիոնալ Արժեքների հատվածին և այդ արժեքներից բխող մի շարք Էթիկայի Սկզբունքների հերթականության փոփոխման և միացման մեջ: Այս փաստաթուղթը այդ վերջին ջանքերի արդյունքն է:

Համաձայն սկզբնական որոշման ոգու և գրականության, Միջազգային Վիճակագրական Ինստիտուտը ներկայացնում է այս վերանայված և արդիականացված Պրոֆեսիոնալ Էթիկայի Հռչակագիրը, շարունակական հույսով և հավատով, որ նոր փաստաթուղթը կաջակցի գործընկերներին հետևելու իրենց պրոֆեսիոնալ նպատակներին և պարտականություններին ողջ աշխարհում: